ԻՍԼԱՄԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԴԵՐԸ ՀԵՏԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԱԴՐԲԵՋԱՆՈՒՄ

Գայանե Չոբանյան[*]

Հետխորհրդային Ադրբեջանում իսլամի քաղաքականացումը պայմանավորված է ինչպես ներքին, այնպես էլ արտաքին գործոններով: Ներքին հիմնական խթանիչներից են ԽՍՀՄ փլուզումից հետո ազգային և մշակութային ինքնության փնտրտուքները, միասնական գաղափարախոսության բացակայությունը, բնակչության սոցիալական ծանր պայմանները, իսկ արտաքին ազդակները պայմանավորված են կրոնական կառույցների միջոցով տարածաշրջանում կարևոր աշխարհաքաղաքական կենտրոն և գեոստրատեգիական երկրների շահերի բախման թատերաբեմ հանդիսացող Ադրբեջանի վրա իրենց ազդեցությունը տարածելու հարևան մուսուլմանական երկրների նկրտումներով:

Իսլամի կարգավիճակը խորհրդային Ադրբեջանում

Իսլամը մեծ դեր է խաղացել Ադրբեջանի թյուրքերի ինքնության ձևավորման գործընթացում և միշտ եղել է ինքնագիտակցության կարևոր ու անբաժանելի տարրերից մեկը: ԽՍՀՄ փլուզումից հետո Ադրբեջանում առաջացած գաղափարական վակուումը հնարավորություն տվեց նոր ձևավորվող ազգային ինքնագիտակցության առաջացման հետ մեկտեղ պաշտոնական իսլամական գաղափարների և

[*] ԵՊՀ հայցորդ:

դրանց զուգահեռ գոյություն ունեցող «ազգային իսլամի»[1] վերածնմանը: Հարկ է նշել, որ չնայած ԽՍՀՄ կառավարման 70 տարիների ընթացքում աթեիստական գաղափարների տարածմանը և այն բանին, որ աշխարհիկությունն իսլամական ինքնագիտակցություն ունեցող ազգերի նկատմամբ խորհրդային քաղաքականության հիմքն էր, «մշակութային իսլամն» Ադրբեջանում՝ ավանդույթային և կենցաղային կողմերով, միշտ էլ պահպանել է իր խոր արմատները:

Խորհրդային իշխանության կառավարման տարբեր ժամանակաշրջաններում վերաբերմունքն իսլամի նկատմամբ եղել է ոչ միանշանակ՝ կախված արտաքին քաղաքական զարգացումներից: Ստալինյան զտումների հիմնական նպատակը քաղաքական իսլամն արմատախիլ անելն էր, սակայն 1930-ականների կեսերին զտումների զոհերն առավել հաճախ մեղադրվում էին այլ պետությունների օգտին պանիսլամիստական գաղափարներ տարածելու մեջ[2]: 1940-ականներից սկսած՝ դադարեցվեց ընդգծված հակակրոնական քարոզչությունը, ինչը պայմանավորված էր Երկրորդ համաշխարհային պատերազմի բռնկմամբ: 1944թ. ապրիլի 14-ին ԽՍՀՄ Գերագույն խորհրդի որոշմամբ վերաբացվեց Անդրկովկասի մուսուլմանների հոգևոր վարչությունը[3], սկսեցին գործել բազմաթիվ մզկիթներ, մեղմացան հոգևորականների նկատմամբ բացահայտ ճնշումները:

Խորհրդային Ադրբեջանում իրավիճակը սկսում է փոխվել 1969 թվականից, երբ Հեյդար Ալիևը դառնում է խորհրդային Ադրբեջանի ՊԱԿ նախագահ և հետագա 20 տարիների ընթացքում փաստացի իր ձեռքում է պահում երկրի կառավարման ղեկը: Շեշտը դրվում է ազ-

[1] «Ազգային իսլամ» արտահայտությունը վերաբերում է իսլամի ադրբեջանական ընկալմանը՝ որպես ինքնության և մշակութային կարևորագույն մասնիկ, այլ ոչ թե որպես կրոն:

[2] *Т.Светаховский,* Русское правление, модернизаторские элиты и становление национальной идентичности в Азербайджане, http://sbiblio.com/biblio/archive/svent_rus/

[3] 1872թ. ցարական Ռուսաստանում ստեղծվեց Անդրկովկասի շիական և սուննիական հոգևոր վարչություն, 1944թ. այն վերաբացվեց Անդրկովկասի մուսուլմանների հոգևոր վարչություն անվամբ, 1959թ. ստացավ Անդրկովկասի մուսուլմանների վարչություն, իսկ 1990թ.՝ Կովկասի մուսուլմանների վարչություն անվանումը:

գային ինքնահաստատման վրա, որին զուգահեռ նաև սկսվում է իսլամի վերածնունդը: Եթե 1976թ. Ադրբեջանում կար 16 գրանցված մզկիթ և 1 մեդրեսե[1], ապա խորհրդային աղբյուրների համաձայն՝ արդեն 1980-ականների վերջերին գործում էին 18 գրանցված և 5 չգրանցված մզկիթներ, մոտավորապես 1000 անօրինական աղոթատներ և մինչև 500 սրբավայրեր [1, c. 253], իսկ 1991թ. մզկիթների և այլ կրոնական կազմակերպությունների թիվը հասավ 84-ի [2, c. 249]: Այս գործընթացը հիմք դրեց հասարակության մեջ կրոնի դիրքերի ամրապնդմանը և հետագա տասնամյակներում հարյուրավոր նոր մզկիթների առաջացմանը, որոնց թիվն այժմ 1800-ից ավելի է[2]: Գորբաչովյան վերակառուցման ժամանակաշրջանում իսլամական գործոնն արդեն բացահայտորեն արտացոլվում էր կենցաղում, գրական, հասարակական ոլորտներում և նույնիսկ քաղաքական դաշտում: Այս գործընթացին նպաստում էր նաև հարևան Իրանում սկիզբ առած կրոնական հեղափոխության ալիքը, ինչը սպառնում էր իր ազդեցությունը տարածել նաև խորհրդային իշխանությունից ազատվելու ճանապարհին գտնվող և ներքաղաքական թեժ պայքարով համակված խորհրդային Ադրբեջանի վրա: Խորհրդային համակարգին այլընտրանքային խորհրդանիշ սկսեց դառնալ Իրանի առաջնորդ այաթոլա Ռուհոլլահ Խոմեյնին, որի նկարը հաճախ կախված էր մարդկանց տներում, չնայած այդ մարդիկ նույնիսկ ծանոթ էլ չէին նրա աշխարհայացքին և գաղափարախոսությանը: Այդ ժամանակից ի վեր իսլամը հասարակության լայն շերտերի համար դառնում է ավելի նշանակալի՝ ստանձնելով ոչ թե հոգևոր, բարոյական, արժեհամակարգային, այլ քաղաքական և գաղափարախոսական խնդիրների լուծման դեր: Հ.Ալիևը, հետագայում՝ նաև այլ քաղաքական գործիչներ սկսեցին օգտագործել իսլամական խորհրդանիշները լայն զանգվածների վրա

[1] *Р.Мотека,* Исламские сети в Азербайджане 90-х годов, http://www.sakharov-center.ru/publications/azrus/az_010.htm
[2] http://vesti.az/news.php?id=80336.

իրենց ազդեցությունը տարածելու և նրանց աջակցությունը վայելելու նպատակով՝ դրանով իսկ կրոնը ծառայեցնելով իրենց քաղաքական դիրքերի ամրապնդմանը: Հ.Ալիևի օրինակով Ա.Մութալիբովը, որը 1990թ. հունվարին ներքաղաքական լարված իրադրության պայմաններում փոխարինել էր խորհրդային Ադրբեջանի կոմունիստական կուսակցության առաջին քարտուղար Ա.Վեզիրովին, հետևելով քաղաքական և հասարակական տրամադրությունների զարգացումներին ու տեսնելով, որ կոմունիստական սիմվոլիկան իրականում այլևս ոչինչ չի նշանակում ժողովրդի համար, սկսում է իր ելույթներում ոչ այդքան բացահայտորեն օգտագործել կրոնական զգացողություններին հաճո մտքեր (օրինակ,«Ճշմարիտ հավատով մարդը մեր հասարակության անդամն է, որն այսօր մասնատված է հակասություններով հենց իշխող անհավատության պատճառով»[1]), իսկ հետագայում իրեն հավատացյալ մարդ է հայտարարում: Բնակչության լայն զանգվածների համակրանքը վայելելու համար նա իր քաղաքական ուղեծրում հենվում է ինչպես պաշտոնական իսլամը ներկայացնող Կովկասի մուսուլմանների վարչության, այնպես էլ ոչ օրինական կրոնական «Թյովբե» («Զղջում») և «Գարդաշլրք» («Եղբայրություն») միությունների աջակցության վրա: 1990թ. հունվարին Ա.Ախունդովի գլխավորությամբ ձևավորված «Գարդաշլրք» միությունը, որն իրականում զուտ կրոնական կազմակերպություն չէր, սակայն իր գործունեության մեջ հավատարիմ էր իսլամի սկզբունքներին, մեծ դեր խաղաց Մութալիբովի իշխանության ամրապնդման և նախընտրական քարոզարշավի գործում: Իսկ «Թյովբե» միությունը հիմնվել էր 1989թ. մի խումբ «ապաշխարած» նախկին քրեական հանցագործների կողմից՝ Աբդուլ Աբդուլովի (Հաջի Աբդուլ) գլխավորությամբ, որն օգտագործելով Մութալիբովի հետ սերտ կապերը՝ որոշակի դերակատա-

[1] *Д.Фурман, А.Абасов,* Азербайджанская революция, http://www.sakharov-center.ru/publications/azrus/az_005.htm

րություն ունեցավ Ադրբեջանի ներքաղաքական կյանքում[1]: Այս պահպանողական կրոնական կազմակերպությունները պատրաստակամորեն աջակցում էին ռուսամետ ուժերին իրենց լիբերալ և ազգայինդեմոկրատներ որակող հոսանքների դեմ պայքարում:

Իսլամը՝ որպես քաղաքական գործիք Ադրբեջանի Հանրապետությունում

Ադրբեջանի անկախացումից հետո երկրի արտաքին քաղաքական կուրսը շրջվեց դեպի իսլամական աշխարհ. 1991թ. դեկտեմբերի 8-ին Ադրբեջանը դարձավ առաջին հետխորհրդային իսլամական հանրապետությունը, որն ընտրվեց Իսլամական կոնֆերանս կազմակերպության լիիրավ անդամ, դիվանագիտական հարաբերություններ հաստատվեցին Սաուդյան Արաբիայի, Քուվեյթի, ԱՄԷ-ի, Եգիպտոսի, Իրաքի, Սիրիայի, Պակիստանի հետ, ակտիվացան իսլամական ընդհատակյա կազմակերպությունները: Արդեն 1991թ. երկրում գործում էին ոչ պաշտոնապես գրանցված մի շարք միություններ ու կուսակցություններ, որոնցից առավել ազդեցիկներն էին Ադրբեջանի իսլամական կուսակցությունը (ԱԻԿ, Ազերբայջան իսլամ փարթիյասը), Իսլամական առաջընթացի ադրբեջանական կուսակցությունը (Ազերբայջան իսլամ թարաքքի փարթիյասը), «Ազատ հոգևորականներ» (Ազադ Ռուխանիլեր) և «Ջղջում» (Թյովբե) միությունները[2]: 1990-ականների սկզբներին հրատարակվում էր իսլամական ուղղվածության երեք թերթ՝ «Իսլամ», որը ոչ քաղաքական շաբաթաթերթ էր և Կովկասի մուսուլմանների վարչության պաշտոնական մարմինն էր, քաղաքական կողմնորոշում ունեցող «Իսլամ դունյասը» (Իսլամական

[1] 1991թ. Աբդուլ Աբդուլովն ընտրվում է Գերագույն խորհրդի պատգամավոր, սակայն 1992թ., երբ Գերագույն խորհուրդը լուծարվում է և կազմավորվում է Ազգային ժողովը (Միլի մեջլիս), նա կորցնում է պատգամավորական աթոռը: 1997թ. սերտ կապեր է ունեցել Ալիզադե եղբայրների կողմից ղեկավարվող Սոցիալ-դեմոկրատական կուսակցության հետ, իսկ 1999թ. իր համակիրների հետ միասին հիմնել է Ադրբեջանի լիբերալ-սոցիալիստական կուսակցությունը:

[2] *А.Абасов,* Ислам в современном Азербайджане: образы и реалии, http://www.sakharov-center.ru/publications/azrus/az_009.htm

աշխարհ) և «Իսլամըն սեսի» (Իսլամի ձայնը) թերթերը[1], որոնք պատկանում էին ԱԻԿ-ին[2]:

Անկախացման առաջին տարիներին ձևավորված կրոնական կառույցներից քաղաքական դաշտում մինչև օրս շարունակում է որոշ դերակատարություն ունենալ Ադրբեջանի իսլամական կուսակցությունը, որը երկրում միակ կազմակերպված կրոնական ամենախոշոր ուժն է: Այն ստեղծվել է 1991թ. Նարդարանում, որի ակունքներում կանգնած էին Ադրբեջանի ժողովրդական ճակատի կազմից դուրս եկած մի խումբ գործիչներ՝ Ալիաքրամ Ալիևի գլխավորությամբ, սակայն պաշտոնական գրանցում է ստացել մեկ տարի անց: Կուսակցության գաղափարախոսության հիմքում այն համոզմունքն է, որ պետությունը չի կարող դուրս գալ ճգնաժամից այնքան ժամանակ, մինչև ղեկավարները չդիմեն իսլամական արժեքներին և պետական կազմավորման իսլամական նորմերին: Այն որդեգրել էր ընդգծված հակակառավարական, հակասեմիթական և հակաթուրքական քաղաքականություն: Սկզբնական շրջանում ԱԻԿ գլխավոր նպատակն Իրանի Իսլամական Հանրապետության օրինակով երկրում իսլամական կառավարության ստեղծումն էր, սակայն ներկայիս զարգացումներին զուգահեռ այն մեղմել է իր ընդգծված իրանամետ ուղղվածությունը և վարում է ավելի ճկուն քաղաքականություն: 1995թ. իսլամը քաղաքական նպատակներին ծառայեցնելու մեղադրանքի հիման վրա կուսակցությունը զրկում են գրանցումից, իսկ 1996թ. մայիսին նրա 9 ղեկավար անդամներ բանտարկվում են՝ մեղադրվելով Իրանի օգտին լրտեսություն իրականացնելու և պետական հեղաշրջում կազմակերպելու փորձի մեջ: Ձերբակալության հիմք հանդիսացավ ապրիլի 6-ին ազգային անվտանգության կողմից Իրանի հետ սահմանի վրա ԱԻԿ

[1] 1993թ. ֆինանսական խնդիրների պատճառով փակվեց «Իսլամ» թերթը, իսկ 1995թ., երբ ԱԻԿ-ը արդարադատության նախարարությունում չկարողացավ վերագրանցվել և հայտարարվեց օրենքից դուրս, փակվեցին նրա տպագիր օրգանները՝ «Իսլամ դունյասը» և «Իսլամըն սեսի» թերթերը:

[2] *R.Sattarov,* Islam az a political factor in post-Soviet Azerbaijan, Central Asia and the Caucasus, 4(28), 2004, http://www.ca-c.org/online/2004/journal-_eng/cac-04/cacE4(28)2004.pdf

անդամ 18 երիտասարդների հայտնաբերումը, որոնց, պաշտոնական տեղեկատվության համաձայն, տեղափոխում էին Իրան՝ հատուկ ճամբարներում ռազմաքաղաքական վերապատրաստում անցնելու նպատակով [3, c. 22]: Մինչև այժմ կուսակցությունը չունի պետական գրանցման փաստաթուղթ, սակայն կառավարությանը չի հաջողվում ամբողջովին ճնշել ԱԻԿ ակտիվիստներին: Կուսակցության հակակառավարական բողոքի ակցիաները հիմնականում ուղղված են երկրում սոցիալական անարդարությունների, քաղաքացիական, կրոնական իրավունքների ոտնահարման դեմ, ինչպես նաև վերջին ժամանակներս հաճախ են բարձրացնում Ղարաբաղյան հակամարտության կարգավորման հարցը՝ պահանջելով երկրում հայտարարել ռազմական դրություն և սկսել յուրաքանչյուր մուսուլմանի համար պարտադիր ջիհադ[1]: 2010թ. օգոստոսին նրանք նույնիսկ հայտարարեցին Ղարաբաղյան հակամարտության իսլամական կազմակերպության ստեղծման մասին: ԱԻԿ վերջին լայնածավալ գործողություններն Ադրբեջանի կրթության նախարարության կողմից դպրոցներում աղջիկներին հիջաբ կրելն արգելող օրենքի դեմ էին: Բողոքների արդյունքում կուսակցության ղեկավար Մովսում Սամեդովը և այլ անդամներ անօրինական զինամթերք ձեռք բերելու, ահաբեկչություն և պետական հեղաշրջում կազմակերպելու մեղադրանքով 2011թ. բանտարկվել ու դատապարտվել են 10-12 տարի ազատազրկման[2]:

Աբուլֆազ Էլչիբեյի գլխավորությամբ Ադրբեջանի ժողովրդական ճակատի (ԱԺՃ) իշխանության գտնվելու ժամանակաշրջանում (1992-1993թթ.) իսլամը դարձավ իշխող թյուրքականության գաղափարախոսության կարևոր տարրերից մեկը: Էլչիբեյը պաշտոնական արարողությունների ժամանակ սկսեց բացահայտ օգտագործել իսլամա-

[1] *М.Мамедов,* «Объявить в стране военное положение», призывает Исламская партия Азербайджана, «Зеркало», 17 июля 2009г., http://ru.salamnews.org/ru/news/read/8421/eksklyuziv-predsedatel-islamskoy-partii-azerbaydana-v-sluchae-voyni-v-karabaxe-dixad-obyazatelen-dlya-kajdogo-musulmanina/

[2] http://www.centrasia.ru/newsA.php?st=1294492680, http://www.kavkaz-uzel.ru/articles/196743/, http://www.zerkalo.az/2011-10-06/politics/23619-islamist-%20zaxvat%20vlasti-%20sud

կան սիմվոլիկան՝ երդում տալով Ղուրանի վրա: Մուսուլմանական երկու կարևոր տոները՝ Քուրբան Բայրամը և Ռամազան Բայրամը, դարձան պետական տոներ: Ազգային ինքնագիտակցության հիմքը խարսխվեց թյուրքիզմի և իսլամի յուրահատուկ խառնուրդի վրա: Իշխանությունը պահպանելու համար ԱԺՃ-ն հենվում էր ազգայնական գաղափարների վրա հիմնված այնպիսի կուսակցությունների աջակցությանը, ինչպիսիք են Ադրբեջանի ազգային-դեմոկրատական կուսակցությունը (ԱԱԴԿ, «Թուրան») և Թյուրքական աշխարհի միջազգային կուսակցությունը (ԹԱՄԿ, «Գորշ գայլերի» քաղաքական թևն Ադրբեջանում): ԱԱԴԿ-ն հանդես էր գալիս պանթյուրքական կողմնորոշմամբ ազգային աշխարհիկ պետության ստեղծման օգտին: Ըստ կուսակցության գաղափարախոսության, իսլամը կարող է զգալի դեր խաղալ պետական կազմավորման մեջ, քանզի կարող է ծառայել թյուրքական ազգերի միախմբման գործին, սակայն էթնոսի զարթոնքի համար կարևոր է ոչ թե հավատը, այլ ազգային ոգին, ինչը բարձր է կրոնից: Իսկ ԹԱՄԿ-ը հենվում էր ազգայնամոլական գաղափարախոսության, համաթյուրքական գաղափարի և սիմվոլների վրա: Նրանց համար իսլամը զուտ թյուրքերի կրոնն է, որը կապված է վերջին դարերի կենցաղային մշակույթի հետ[1]:

1992թ. օգոստոսի 18-ին Միլի մեջլիսն ընդունեց «Դավանանքի ազատության» վերաբերյալ օրենք, հռչակվեց կրոնի անջատումը պետությունից, փոխադարձ չմիջամտում միմյանց գործերին, վերականգնվեց մզկիթներ, եկեղեցիներ, սինագոգներ և աղոթատներ բացելու, նոր կրոնական միություններ ստեղծելու և գրանցելու իրավունքը: Այս ամենի արդյունքում պետական գրանցված մզկիթների ու իսլամական կազմակերպությունների թիվը հասավ 230-ի, իսկ չգրանցվածներինը՝ 900-ի[2]: Սակայն քաղաքական վերնախավը շեշտը դրել

[1] *А.Полонский,* Ислам в контексте общественной жизни современного Азербайджана, http://his.1september.ru/articlef.php?ID=199902802

[2] *А.Абасов,* Ислам в современном Азербайджане: образы и реалии, http://www.sakharov-center.ru/publications/azrus/az_009.htm

էր ազգայնականության վրա, իսկ կրոնին հատկացված էր ծառայողական երկրորդական գործառույթ: Ինչպես ասել է ԱԺՃ այն ժամանակվա առաջնորդներից մեկը՝ ներկայում «Մուսավաթ» կուսակցության նախագահ Իսա Ղամբարը, «Իսլամի նշանակությունը մեծ է մեզ համար, քանզի այն մեզ կապում է մուսուլմանական աշխարհի երկրների հետ» [4]: Քանի որ 1918-1920թթ. Ադրբեջանական Դեմոկրատական Հանրապետությունը (ԱԴՀ) միակ պետական կազմավորումն էր, որին ադրբեջանցիները կարող էին վերագրել ազգային դիմագիծ, հետևաբար ադրբեջանական ազգայնականությունը չէր կարող չանդրադառնալ այդ ժամանակաշրջանին և չվերարտադրել ԱԴՀ իշխող կուսակցության՝ «Մուսավաթ»-ի գաղափարախոսությունը՝ «Թյուրքիզմ, արդիականացում և իսլամ»: Պանթյուրքիզմի և պանիսլամիզմի գաղափարախոսությունների միջև ընտրությունը կատարվեց պանթյուրքիզմի օգտին, ինչը երկրի անկախություն ձեռք բերելու պայքարի մեջ համարվում էր անհրաժեշտ և հիմնարար պայման, իսկ պանիսլամիզմը հիմնականում ասոցիացվում էր Իրանի հետ:

Արտաքին իսլամական ազդեցությունը

Քաղաքական իսլամի վերելքն Ադրբեջանում պայմանավորված էր նաև արտերկրից ծայրահեղական կրոնական խմբավորումների ներթափանցմամբ, հատկապես՝ քաղաքականացված իսլամական շարժումներն Իրանից, արաբական երկրներից, Թուրքիայից, Ռուսաստանից (Հյուսիսային Կովկաս): Այս շարժումները նպաստեցին երկրում «իսլամական արմատականության» (իսլամիզմ) տարածմանը, ինչը քաղաքականացված իսլամի ծայրահեղ, ագրեսիվ դրսևորումն է: ԱԺՃ իշխանության գտնվելու մեկ տարվա ընթացքում աճեց Իրանից Ադրբեջան ներթափանցած հոգևորականների, քարոզիչների, ինչպես նաև կրոնական ահաբեկչական ուղղվածություն ունեցող

կառույցների[1] թիվը, որոնք փորձեցին օգտագործել այս փոփոխությունների և անկայունության ժամանակաշրջանը՝ հետագա ազդեցության հիմքեր կառուցելու համար: Իրանական կրոնական քարոզչությունը հատկապես ակտիվ էր փախստականների, գյուղերի անապահով բնակչության, ինչպես նաև ազգային փոքրամասնությունների՝ հարավային շրջանում թալիշների և Ապշերոնյան թերակղզում՝ թաթերի շրջանում: Սակայն առկա էին մի շարք խորքային պատճառներ, որոնք արգելք հանդիսացան իրանական ազդեցության լայնամասշտաբ տարածմանը:

Ինչպես 180 տարվա ցարական և խորհրդային իշխանությունները, այնպես էլ տեղական սովորույթներն ամուր հիմքեր էին գցել Ադրբեջանում իսլամի տարաբնույթ դրսևորումների համար, և քանի որ ազգայնականությունը խարսխված էր թյուրքիզմի յուրահատուկ գաղափարախոսության վրա, Իրանը, անկախ ընդհանուր շիական ֆոնից, չէր կարող որպես մոդել ծառայել էթնոնացիոնալիզմն իսլամի հետ համադրող ազգային պետության համար [5. p. 114]: Հասարակության կողմից Իրանի Իսլամական Հանրապետության բացասական ընկալման կարևոր գործոններից էր նաև «միասնական Ադրբեջան»-ի գաղափարախոսության քարոզչությունը, որն Իրանին ներկայացնում էր որպես Արաքսի մյուս ափին բնակվող իրենց եղբայրների կեղեքիչ, Ղարաբաղյան պատերազմում թշնամի Հայաստանի հետ բարիդրացիական հարաբերություններ կառուցող երկիր:

Այս ժամանակահատվածում ակտիվացավ նաև Թուրքիայից եկող «աշխարհիկ» կրոնական քարոզչությունը, ինչը, քաղաքական դրդապատճառներից ելնելով, Ադրբեջանի իշխանությունների կողմից միշտ էլ բավական ջերմ է ընդունվել: Թուրքիայի ռազմական, տնտեսական և քաղաքական աջակցությունը չկորցնելու նպատակով

[1] «Զեյշուլլահ» («Ալլահի բանակ»), «Հեզբոլլահ» («Ալլահի կուսակցություն»),«Հուսեյնիյա» («Հուսեյնի կողմնակիցներ») կազմակերպությունները, «Իմամի» («Իմամներ»), «Զեյնաբիլյար» («Զեյնաբի կողմնակիցներ») միությունները, «Ահլի բեյթ» (արաբ. «Մարգարեի ընտանիք» կամ «Տան մարդիկ») ասոցիացիան և այլն:

Էլչիբեյն ամեն ինչով սատարում էր Ադրբեջանում գործող թուրքական պաշտոնական կազմակերպությունների կրոնական գործունեությանը, մզկիթների, հոգևոր դպրոցների բացմանը: Բացի այդ, Ադրբեջանի կառավարությունը «թուրքական սուննիական իսլամը» համարում էր ադրբեջանական պետության աշխարհիկ մոդելի հետ ամենահամադրելի ուղղությունը: Քանի որ Ադրբեջանում արդեն մեծ ազդեցություն էին գտել քեմալական գաղափարները, թուրքական պաշտոնական կրոնական կառույցները՝ Կրոնական հարցերով Թուրքիայի նախարարության (Դինայեթ իշլերի բաշքանլըղը) հսկողության ներքո, ավելի շատ իրականացնում էին ոչ թե քաղաքական քարոզչական, այլ մշակութային, կրթական գործառույթ: Սակայն պաշտոնական ուղղությանը զուգահեռ՝ «թուրքական իսլամը» տարածվում էր նաև անկախ կրոնական կառույցների միջոցով: Խորհրդային ժամանակներից և առավել ևս անկախացումից հետո Ադրբեջանում հատկապես ակտիվ գործում էր թուրքական «նաքշիբենդի» թարիքաթը[1], որը մեծ տարածում ուներ պաշտոնյաների շրջանում: Սակայն, երբ ապացուցվեց 1995թ. պետական հեղաշրջման փորձի մեջ թուրք գործակալ Ֆարման Դեմիրքյոլի ակտիվ մասնակցությունը, որը նաև թարիքաթի անդամ էր, նաքշիբենդիների շարժումը ենթարկվեց հալածանքների և անդամները վտարվեցին երկրից: 1990-ականների կեսերին ակտիվ էին նաև «սուլեյմանի», «մևլանա» և «քադիրի» թարիքաթները, որոնց գաղափարախոսության հիմնական տարածողները Բաքվում ուսում ստացող թուրք ուսանողներն էին: Ադրբեջանում գործող թուրքական ոչ պետական կրոնական կազմակերպությունների մեջ առավել մեծ ազդեցություն ուներ «նուրջիստների» (թուրք. «նուրջուլար») շարժումը[2]: Այս շարժումն ավելի ակտիվացավ, երբ

[1] Արաբերենից թարգմանաբար նշանակում է «ուղի», «Աստծուն ճանաչելու մեթոդ», սուֆիական եղբայրության հոմանիշն է, իսկ եվրոպական գրականության մեջ օգտագործվում է միություն իմաստով:

[2] Իսլամական հոգևոր առաջնորդ Սաիդ Նուրսիի (1873-1960) հետևորդները:

1969թ. նրա գլուխ անցավ միլիարդատեր Մուհամադ Ֆաթուլա Գյուլենը[1], որը, ունենալով մեծ ֆինանսական կապիտալ, ԽՍՀՄ փլուզումից հետո կարճ ժամանակում կարողացավ իր շարժումը հաստատել բոլոր հետխորհրդային մուսուլմանական երկրներում: Գյուլենի կարծիքով՝ ժամանակակից աշխարհի գլխավոր հարստությունը գիտելիքն է, հետևաբար նա շեշտը դրել է ոչ թե կրոնական ծիսական կամ դավանաբանական սկզբունքների քարոզչության, այլ տնտեսական ձեռնարկությունների, կրթական հաստատությունների, հրատարակչության և հեռուստառադիոհեռարձակման վրա, ինչն ապահովում է նրան տնտեսական, քաղաքական բազմաթիվ լծակներ: Իսլամի վերիմաստավորման գյուլենյան հայացքները բացասաբար են ընկալվում իսլամական աշխարհում, հատկապես Իրանում և արաբական երկրներում, որոնք Գյուլենին համարում են ԱՄՆ և Իսրայելի գործակալ:

Դրսից ծայրահեղական իսլամական կազմակերպությունների[2] միջոցով Ադրբեջան ներթափանցած ամենավտանգավոր կրոնական ուղղությունը համարվում է արաբական երկրներից, մասնավորապես՝ Սաուդյան Արաբիայից, Քուվեյթից, և Հյուսիսային Կովկասից, հիմնականում՝ Չեչնիայից ու Դաղստանից ներթափանցած վահաբականությունը (սալաֆիականություն)[3]: Այն Ադրբեջան ներթափանցեց մասնավորապես ղարաբաղյան (1991-1994թթ.) և ռուս-չեչենական պատերազմների (1994-1996թթ., 1999թ.) հետևանքով՝ տարածվելով

[1] Մանրամասն տե՛ս *B.Aras, O.Caha,* Fethullah Gulen and his liberal «Turkish islam» movement, MERIA journal, No. 4, 2000, http://meria.idc.ac.il/journal/2000/issue4/jv4n4a4.html, religion.info/english/interviews/article_74.shtml

[2] «Ալ-Քահդա» («Հիմք»), «Ալ-Ջիհադ» («Սրբազան պատերազմ»), «Ջամիյաթ ալ-իհվան ալ-մուսլիմին» («Եղբայր մուսուլմանների» միություն»), «Գամաա ալ-իսլամիյա» («Իսլամական ահաբեկչություն») և այլն:

[3] Սալաֆիականությունը ֆունդամենտալիստական կրոնական ուղղություն է, որը միտված է վերադարձնելու իսլամում Մուհամեդ մարգարեի ժամանակներում գործող սկզբնական կրոնական արժեքները՝ հանդես գալով կրոնի արդիականացման դեմ: Իսկ վահաբականության անվանումը ծագել է «իսլամի վերածնման» նպատակով XVIII դ. Մուհամադ իբն Աբդ ալ-Վահաբիի գլխավորությամբ առաջացած ծայրահեղական կրոնական շարժման անունից: Այսօր այս երկու եզրույթները հաճախ նույնացվում են, սակայն վահաբականության հետևորդները, որոնք ասոցիացվում են ահաբեկիչների, ծայրահեղականների հետ, գերադասում են իրենց անվանել սալաֆիականներ, միաստվածականներ կամ ուղղակի մուսուլմաններ:

Ռուսաստանին սահմանակից հյուսիսային շրջաններում, որտեղի բնակչության ճնշող մեծամասնությունը չեչեն գաղթականներն են, լեզգիները, ավարները, ծախուրները և այլ ազգային փոքրամասնություններ [3, c. 9]: Այն, որ վահաբական գաղափարներն արձագանք գտան հիմնականում ազգային փոքրամասնությունների շրջանում, պատահական չէր, քանզի նրանք դա դիտարկում էին միջոց Հյուսիսային Կովկասում բնակվող իրենց ազգակիցների հետ միավորվելու և անկախ պետական կազմավորում ստեղծելու համար: Ներկայում Ադրբեջանում մեծ համբավ և դերակատարություն ունի վահաբականների կենտրոն համարվող «Աբու Բաքր» մզկիթի իմամ Համեթ Սուլեյմանովը, որը կրոնական, քաղաքական, սոցիալ-տնտեսական խնդիրներ արծարծող յուրահատուկ քարոզների շնորհիվ շատերի համար ներկայիս իշխանություններին այլընտրանքային առաջնորդ է համարվում:

Հեյդար Ալիևի «կրոնական քաղաքականությունը»

Իսլամի քաղաքական դերի բարձրացումը և երկրում արտերկրյա ծայրահեղական կրոնական ուղղությունների միջոցով «իսլամական արմատականության» տարածումը լուրջ սպառնալիք հանդիսացան Ադրբեջանի ավտորիտար իշխանության պահպանման համար: Հետևաբար, երբ 1993թ. Հեյդար Ալիևը եկավ իշխանության, ներքին քաղաքականության մեջ վերջնականապես գերիշխող դարձան աշխարհիկ գաղափարները: Նա իր ձեռքում կենտրոնացրեց ողջ իշխանությունը և իսլամական ընդդիմության նոր առաջացած օջախները վերացնելու, արմատական կրոնական հոսանքներն ու օտարերկրյա իսլամական քարոզիչներին դաշտից հեռացնելու նպատակով ընդունեց կրոնական կազմակերպությունների գրանցմանն ու գործունեությանը խոչընդոտող մի շարք օրենքներ՝ զուգահեռաբար ավելի ամրացնելով պաշտոնական իսլամական հոգևորականության դիրքերը:

Սակայն այս բոլոր գործողությունների հետ մեկտեղ, նա վարում էր հավասարակշիռ քաղաքականություն. չէր հրաժարվում իսլամական ցուցադրական խորհրդանիշերից՝ մուսուլմանական երկրների հետ բարիդրացիական հարաբերություններ պահպանելու և կրոնական զգացումներ ունեցող ժողովրդի լայն զանգվածին չօտարելու համար: Իր երդմնակալության ժամանակ նա հանդիսավոր համբուրեց Ղուրանը և օրհնություն ստացավ շեյխ ուլ իսլամ Փաշազադեից, ինչն ամենևին չէր նշանակում բարեհաճ վերաբերմունք իսլամի նկատմամբ: Կովկասի մուսուլմանների վարչությունը և դրա ղեկավարն ինչպես խորհրդային ժամանակներում, այնպես էլ մինչև օրս շարունակում են ակտիվ մասնակցություն ունենալ ներքաղաքական իրադարձություններին և հանդես գալ որպես իշխանությունների քարոզչության ու փառաբանման գործիք՝ իրենց դեմ տրամադրելով ժողովրդի մեծ հատվածին: Օրինակ, 1990թ. հունվարի 20-ին շեյխ ուլ իսլամ Փաշազադեն, կրոնական ավանդույթի համաձայն, հայտարարեց 40-օրյա սուգ Բաքվում հայերի ջարդերը դադարեցնելու նպատակով խորհրդային զինվորականության «ուշացած» գործողությունների արդյունքում մահացած «անմեղ զոհերի» հիշատակին, ինչը վերածվեց քաղաքական բողոքի ընդդեմ Մոսկվայի կառավարության: Որոշ ուսումնասիրողներ հունվարի 20-ի իրադարձությունները բնորոշում են որպես Ադրբեջանում իսլամի վերածնման և քաղաքականություն մուտքի սկիզբ [6]: 1993թ. հունիսին կրոնական առաջնորդը փորձեց նաև միջնորդի դեր խաղալ նախագահ Էլչիբեյի և ապստամբություն բարձրացրած Սուրեթ Հուսեյնովի միջև [7, p. 7], իսկ արդեն 2003թ., չարաշահելով կրոնական դիրքը և հավատացյալների նկատմամբ ունեցած լծակները, ակտիվ մասնակցություն ունեցավ նախընտրական քարոզարշավին. մայիսի 31-ին Գուբայում նա հրապարակավ հայտարարեց. «Մենք ունենք մեկ Աստված, մեկ մարգարե և մեկ նախագահ, դա Հեյդար Ալիևն է», մեկ ամիս անց կրկին հանդես եկավ

նմանատիպ հայտարարությամբ. «Գնալ Հեյդար Ալիևի դեմ, նշանակում է՝ գնալ Ալլահի կամքին հակառակ» [8], իսկ նրա մահվանից հետո շարունակեց նույն աջակցությունը ցուցաբերել որդուն՝ Իլհամ Ալիևին: Նախագահության առաջին օրվանից Հ.Ալիևը մասնակցել է գրեթե բոլոր մուսուլմանական կարևոր միջոցառումներին՝ Քուրբան Բայրամ, Ռամազան Բայրամ, Մովլուդ, Աշուրա: 1920 թվականից ի վեր նա առաջին ադրբեջանական առաջնորդն էր, որ 1994թ. հուլիսին, որպես Ադրբեջանի նախագահ Սաուդյան Արաբիա իր առաջին պաշտոնական այցի ժամանակ, շեյխ ուլ իսլամ Փաշազադեի ուղեկցությամբ ուխտագնացություն կատարեց դեպի Մեքքա:

Սակայն իսլամական գործոնը սկսեց կորցնել իր քաղաքական նշանակությունը, երբ 1994թ. ստորագրվեց նավթային «դարի պայմանագիրը» և Ադրբեջանի արտաքին քաղաքական ուղեծիրը կտրուկ շրջվեց դեպի Արևմուտք: 1995թ. նոյեմբերի 12-ին ընդունված Ադրբեջանի Հանրապետության նոր սահմանադրությունը հաստատեց երկրի աշխարհիկ էությունը (7-րդ հոդված, 1-ին կետ), կրոնի անջատումը պետությունից և օրենքի առաջ բոլոր հավատալիքների հավասարությունը (18-րդ հոդված, 1-ին կետ), կրթության համակարգի աշխարհիկ էությունը (18-րդ հոդված, 3-րդ կետ)[1]: Սահմանադրությամբ չէր նշվում երկրում պետական կրոնի կամ պետական կրոնական միության առկայությունը, սակայն ապահովում էր յուրաքանչյուրի խղճի ազատությունը, իրավունքը՝ ազատորեն որոշելու կրոնի նկատմամբ իր վերաբերմունքը, ինքնուրույն կամ ուրիշների հետ դավանել կամ չդավանել որևէ կրոն, արտահայտել կամ տարածել կրոնի նկատմամբ սեփական համոզմունքները (48-րդ հոդված, 1-ին, 2-րդ կետեր)[2]: Հոգևորա-

[1] Azərbaycan Respublikasının Konstitusiyası, http://www.azerbaijan.az/portal/General/Constitution/doc/constitution_a.pdf

[2] *Н.А. Пашаева, М.В. Мархгейм,* Конституционно-правовой анализ государственной политики в сфере конфессиональных отношений в Азербайджане, http://www.fpa.su/problemy-konstitutsionnogo-prava-zarubezhnyh-stran/konstitutsionno-pravovoy-analiz-gosudarstvennoy-politiki-v-sfere-konfessionalnyh-otnosheniy-v-azerbaydzhane-n-a-pashaeva-m-v-marhgeym.html

կաններին քաղաքական դաշտից հեռու պահելու նպատակով Ալիևն ընդունեց օրենք, որի համաձայն՝ հոգևոր ծառայողներն իրավունք չունեին մասնակցելու ինչպես Միլի մեջլիսի, այնպես էլ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններին (56-րդ հոդված, 3-րդ կետ, 85-րդ հոդված, 2-րդ կետ): Արդյունքում՝ կրոնի վերաբերյալ ընդունված սահմանադրական բոլոր կետերով արգելվում էր քաղաքական նպատակներով իսլամի օգտագործումը: Փաստաթուղթը բողոքի ալիք բարձրացրեց Իրանի հոգևորականների մեծամասնության շրջանում, այն, մասնավորապես, դատապարտեցին այաթոլա Ահմադ Ջաննաթին և այաթոլա Ալի Աքբար Մեշքինին[1]: 1996թ. խորհրդարանը փոփոխություններ է մտցնում «Դավանանքի ազատության» վերաբերյալ օրենքում, որով արգելվում է օտարերկրյա քարոզիչների գործունեությունը, իսկ տեղական կրոնական միությունները պարտավորվում էին գրանցվել ավանդական կրոնական կազմակերպությունների կենտրոններում[2] (Կովկասի մուսուլմանների վարչություն, Մոսկվայի պատրիարքարանի ուղղափառ եկեղեցի և Բաքվի սինագոգ): Մինչ այդ գրանցում ստացած և ազատ գործող կրոնական կազմակերպություններից շատերը, չհամապատասխանելով ընդունված օրենքի նորմերին, արգելվեցին և դադարեցրին իրենց հետագա գործունեությունը, իսկ որոշներն էլ շարունակեցին անօրինական գործել: Եվ վերջապես, նախագահի հրամանով 2001թ. հունիսին ստեղծվեց Կրոնական կազմակերպությունների հետ աշխատանքի պետական կոմիտե, որը կոչված էր վերահսկելու դավանանքի ազատության ու կրոնական կազմակերպությունների գրանցման վերաբերյալ օրենսդրական նորմերի իրականացումը և օժտված էր կրոնական կառույցների վերաբերյալ որոշումների ընդունման լիակատար ազատությամբ:

[1] BBC Service of World Broadcasting, SU/2467 F/3, 22 November, 1995 (մեջբերված է R. Sattarov, Islam az a political factor in post-Soviet Azerbaijan, Central Asia and the Caucasus, 4(28), 2004).

[2] *Х.Гаджи-Заде,* Свобода совести в Азербайджане, http://www.ca-c.org/journal/16-1998/st_08_gadgizade.shtml

Ալիևյան քաղաքականության շարունակությունը կրոնական նոր իրադրությունների համատեքստում

Եթե մինչև 2000-ականների սկիզբը քաղաքական իսլամը ներքաղաքական զարգացումների վրա ազդեցություն ունեցող լուրջ գործոն և սպառնալիք չէր աշխարհիկ կառավարության համար, ապա երկրում խորացող սոցիալական ծանր իրավիճակը, իշխանությունների կողմից ղարաբաղյան խնդրի մշտական շահարկումը և այն լուծելու անկարողությունը, ինչպես նաև 2003թ. նախագահական և 2005թ. խորհրդարանական անօրինական ընտրությունները ժողովրդի մեջ ավելի արմատավորեցին անվստահությունը ղեկավարության վարած ներքին ու արտաքին քաղաքականության, երկրում չգործող եվրոպական դեմոկրատական գաղափարների նկատմամբ: Իսլամական կառույցների գործունեությունը սկսեց ավելի լայն արձագանք ստանալ ինչպես սոցիալապես անապահով, այնպես էլ իսլամի մեջ գաղափարական, քաղաքական ու հոգևոր նեցուկ տեսնող շրջանակներում: Գիտակցելով երկրում քաղաքական իսլամի վերելքով պայմանավորված ներքին և արտաքին վտանգները՝ Ադրբեջանի իշխանություններն ինտենսիվորեն փորձեցին թուլացնել կրոնի դիքերը, ինչը դրսևորվեց տարբեր պատրվակներով կրոնական իրողությունների նկատմամբ սահմանափակումների կիրառմամբ: Հակակրոնական բացահայտ քաղաքականության համար պատրվակ հանդիսացավ Ադրբեջանի կրոնական քաղաքականության մեջ ջրբաժանի դեր խաղացող 2001թ. սեպտեմբերի 11-ի ահաբեկչական գործողությունը, ինչից հետո Ադրբեջանի կառավարությունը, միջազգային հանրության համաձայնությամբ և աջակցությամբ, ձեռք բերեց ազատ գործելու լայն հնարավորություններ: Սովորական դարձան կրոնական ուղղվածության կուսակցությունների, իսլամական տարբեր ուղղությունների ղեկավարների և հետևորդների զանգվածային ձերբակալությունները, խոշտանգումները, սպանությունները, ընդունվեցին կրո-

նական իրավունքները սահմանափակող օրենքներ: Արգելվեց հիջաբով մուտք գործել կրթական հաստատություններ, գլխաշորով լուսանկարվել պաշտոնական փաստաթղթերի համար, 2008թ. հավատացյալների անվտանգությունն ապահովելու պատճառաբանությամբ արգելվեց մզկիթի բակում կամ որևէ այլ բացօթյա տարածքում նամազ (աղոթք) անելը[1], բարձրախոսներով ազանի (պարտադիր աղոթքի կանգնելու) կանչելը[2]: «Արմատական իսլամի» ազդեցությունը թուլացնելու համար տարբեր պատճառաբանություններով իրար հետևից սկսեցին փակվել կամ հիմնահատակ քանդվել բազմաթիվ մզկիթներ[3], 2009թ. հունիսի վերջին Ադրբեջանի խորհրդարանը կրոնի դավանման ազատության մասին օրենքում փոփոխություններ մտցրեց, համաձայն որոնց՝ արտերկրում աստվածաբանական կրթություն ստացած անձանց արգելվում է իսլամական կրոնական արարողություններ վարելը: Դրանք կարող են իրականացնել միայն Ադրբեջանի Հանրապետության այն քաղաքացիները, ովքեր կրոնական կրթություն են ստացել Ադրբեջանում[4]: Իլհամ Ալիևը, որը շարունակեց հոր հակակրոնական քաղաքականությունը, ավելի դաժանորեն ճնշեց յուրաքանչյուր այլախոհություն և, կարելի է ասել, վերացրեց քաղաքական աշխարհիկ ընդդիմադիր ուժերին, ինչը տեղի ունեցավ ԱՄՆ, ԵՄ լուռ համաձայնությամբ, որոնք, աշխարհաքաղաքական շահերից ելնելով, չէին արձագանքում մարդու միջազգային իրավունքների զանգվածային խախտումներին: Աշխարհիկ ընդդիմության վերացումը հանգեցրեց այն բանին, որ 2006-ից Ադրբեջանի քաղաքական կյանքում առաջացած բացն արագ սկսեց լցվել

[1] http://www.kavkaz-uzel.ru/articles/141150
[2] http://analitika.at.ua/news/v_azerbajdzhane_zapret_na_azan_prinimaet_sereznye_oboroty/2009-11-04-16713
[3] http://www.centrasia.ru/newsA.php?st=1078384980, http://313news.net/forum/index.php?/topic/665/, http://www.newsland.ru/news/detail/id/430619/, http://www.kavkazcenter.com/russ/content/2007/08/20/52404.shtml, http://deyerler.org/ru/33333-r-rrrsrrrrrrrr-srrsss-rsr-rrrs-rrsrss.html, http://deyerler.org/ru/32737-rrsrss-rr-rrrrr-rjorsrjorrri-rrryesssr-ryirr.html
[4] http://www.interfax-religion.ru/aze/?act=news&div=30841

քաղաքական իսլամի համախոհներով: Երկրում քաղաքական կամ այլ խնդիրների հետ կապված յուրաքանչյուր ցույցի, հավաքի արգելման պայմաններում մզկիթները սկսեցին խաղալ, այսպես կոչված, քաղաքական ակումբների դեր [3, c. 11]: Սակայն հակակրոնական գործնական կոշտ քայլերին զուգահեռ՝ Ի.Ալիևն առիթը բաց չի թողնում կրոնը որպես կապող օղակ օգտագործել իսլամական երկրների հետ ավելի սերտ հարաբերություններ կառուցելու համար: Օրինակ, 2012թ. Բաքվում կայացած Տնտեսական համագործակցության կազմակերպության XII գագաթաժողովի շրջանակներում ունեցած իր ելույթում նա շեշտեց, որ կազմակերպության անդամ երկրներին միավորում են ընդհանուր պատմությունը, ընդհանուր արժեքները, այդ թվում և իսլամական կրոնը՝ անհանգստություն հայտնելով որոշ երկրներում տարածված իսլամաֆոբիայի առիթով, նաև նշեց. «Իսլամական սրբերի վիրավորանքը մեզ մոտ արթնացնում է զայրույթի զգացողություն: Մենք պետք է իրականացնենք իսլամի՝ որպես խաղաղության և ողորմածության կրոնի, ավելի լայն քարոզչություն, և դա պետք է հանդիսանա մեր գործունեության հիմքը»[1]: Ի.Ալիևն ավելի խորացրեց համագործակցությունն Իսլամական կոնֆերանս կազմակերպության հետ՝ դրա մեկ ծայրն ուղղելով նաև գլխավոր թշնամու՝ Հայաստանի Հանրապետության դեմ: Կազմակերպության յուրաքանչյուր նստաշրջանի ժամանակ Ադրբեջանի քարոզչական ջանքերի արդյունքում ընդունվում են Ադրբեջանի Հանրապետության նկատմամբ Հայաստանի «ագրեսիայի» դեմ որոշումներ, որոնք դատապարտում են Հայաստանի «զավթողական գործողությունները»՝ պահանջելով ազատել «ադրբեջանական տարածքները», ինչպես նաև Ադրբեջանին հատկացվում է նյութական աջակցություն, մասնավորապես՝ «հայկական ագրեսիայի հետևանքով օկուպացված

[1] www.1news.az/chronicle/20121016011331549.html

տարածքներում» քանդված և ոչնչացված իսլամական պատմական և մշակութային հուշարձանները վերականգնելու նպատակով[1]:

Ամփոփում

2011թ. պաշտոնական վիճակագրական տվյալների համաձայն՝ Ադրբեջանում բնակվող 9.2 միլիոն բնակչության 96%-ը համարվում է մուսուլման՝ մոտավորապես 65% շիա և 35% սուննի: Անկախության 20 տարիների ընթացքում կտրուկ աճել է իրենց հավատացյալ համարող բնակիչների թվաքանակը, բայց անկախ այս տվյալներից՝ հասարակության մեծ մասի կրոնական գիտելիքները և պատկերացումները մնում են սահմանափակ, այն աստիճան, որ անգամ տեղյակ չեն սուննի և շիա իսլամական ուղղությունների դավանաբանական տարբերությունների մասին: Այսինքն՝ իսլամը բնակչության համար ոչ թե ընկալվում է որպես զուտ կրոն, այլ շարունակում է մնալ ինքնության անբաժան մի մաս և պետական քաղաքականության ու գաղափարախոսության այլընտրանքային ուղղություն: Հետևաբար, այսօր Ադրբեջանը փորձում է ստեղծել իսլամի ընկալման իր տարբերակը՝ հնարավորինս չշեշտելով շիա և սուննի հոսանքների տարբերությունները. այն միակ պետությունն է, որտեղ իսլամի երկու ճյուղերի հետևորդները միասին աղոթում են նույն մզկիթում, և հաճախ երկու կրոնական արարողություններն անցկացվում են միևնույն մոլլայի կողմից [9], Ադրբեջանի Իսլամական համալսարանում շիա և սուննի ուսանողների համար նախատեսված ուսուցողական ծրագրերի միջև գրեթե չկա տարբերություն, և վերջապես, Մուսուլմանների հոգևոր վարչությունը ղեկավարում է շիա հոգևորական, որի տեղակալը, սակայն, սուննի է: Ապահովելով իսլամի երկու ճյուղերի համատեղ խաղաղ գոյակցությունը՝ պետությունը պայքարում է նաև երկրում քաղաքական իսլամի վերելքին նպաստող արտերկրյա իսլամական

[1] http://library.aliyev-heritage.org/ru/6958380.html

խմբավորումների դեմ: Եթե 1990-ականներին Ադրբեջանը թույլ էր և ի վիճակի չէր պայքարել դրանց դեմ, ապա 2001թ. սեպտեմբերի 11-ի ահաբեկչական գործողությունից հետո այն միացավ հակաահաբեկչական կոալիցիային ու հնարավորություն ստացավ ԱՄՆ և անդամ այլ երկրների աջակցությամբ արմատախիլ անել երկրում արմատավորված ծայրահեղական իսլամական հոսանքները: Ահաբեկչության դեմ պայքարի քողի տակ քաղաքական, սոցիալական խնդիրներով պայմանավորված յուրաքանչյուր բողոքի ալիք ներկայացնելով որպես կրոնական ծայրահեղականության գործունեության արդյունք՝ իշխանությունները քաղաքական դաշտից հեշտությամբ հեռացնում են իրենց ոչ ցանկալի հոսանքներին:

Թեև այսօր իսլամն Ադրբեջանում քաղաքական լուրջ գործոն չէ և երկրում դեռ չկա ազդեցիկ իսլամական քաղաքական կազմակերպություն, սակայն ղարաբաղյան խնդրի անլուծելիությունը, խորացող սոցիալական ծանր պայմանները, հասարակության շերտերի միջև առաջացած ճեղքվածքը և այլ բացասական երևույթներ ժողովրդին ավելի են օտարում կառավարությունից ու նրա գործիքը հանդիսացող ավանդական կրոնական կառույցներից՝ նպաստելով արմատական իսլամական գաղափարների ամրապնդմանը և իսլամի քաղաքականացմանը:

Նոյեմբեր, 2012թ.

Աղբյուրներ և գրականություն

1. *Т.Святочовски,* Россия и Азербайджан. Пограничный регион в переходный период, Баку, 2000.
2. *Р.Г. Ланда,* Ислам в истории России, Москва, 1995.
3. *А.Юнусов,* Исламская палитра Азербайджана, Баку, 2012.
4. *А.Полонский,* Современный Азербайджан. Партии. Люди. Идеи // История. 1994. № 41-42 (*А.Полонский,* Ислам в контексте общественной жизни современного Азербайджана).

5. *R.Motika,* Islam in Post-Soviet Azerbaijan, Archives de sciences socials des religions, 46e Annee, No. 155, Islam et Pilotique dansle Monde (Ex-) Communiste (Jul.-Sep., 2001).
6. *D.Trofimov,* Islam in the Political Culture of the Former Sovet Union: Central Asia and Azerbaijan, IFSH, Hmaburg, 1995, R. Sattarov, Islam az a political factor in post-Soviet Azerbaijan, Central Asia and the Caucasus, 4(28), 2004.
7. *H.Kotecha,* Islamic and ethnic identities in Azerbaijan: emerging trends and tensions, Baku, 2006.
8. *Р.Оруджев,* Шейх-ул-ислам включился в предвыборную кампанию, «Эхо», 4 июня 2003г., *Т.Алили,* «Идти против Гейдара Алиева значит идти против воли Аллаха», «Эхо», 30 июля 2003г.
9. *R.Motika,* Foreign missionaries, homemade dissidents nad popular Islam: the search for new religious structures in Azerbaijan, The Twelver Shia in modern times: religious culture and political history, ed. by R.Brunner, W.Ende, Social, economic and political studies of the Middle East and Asia, ISSN 1385-3376; v. 72, The Netherlands, 2001.

ПОЛИТИЧЕСКАЯ РОЛЬ ИСЛАМА В ПОСТСОВЕТСКОМ АЗЕРБАЙДЖАНЕ

Гаянэ Чобанян

Резюме

Среди 9.2 млн. населения Азербайджана 96% мусульман, из которых 65% шиитов и 35% суннитов. За 20 лет независимости увеличилась численность людей, считающих себя верующими, но религиозные знания и представления большинства населения остаются ограниченными: так, они даже не знают о конфессиональных отличиях между суннитским и шиитским течениями в исламе, что означает, что ислам воспринимается населением не как религия, а как неотъемлемая часть идентичности и альтернативное направление политики и идеологии. В статье говорится о том, что Азербайджан пытается создать собственный вариант ислама – максимально сглаживая отличия между суннитским и шиитским течениями.